# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2026թ. հունիսի 24-27-ը Շվեյցարիայի Համադաշնություն / Ժնև / կատարած գործուղման արդյունքների մասին

**1.Անունը,ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝**

Ստեփան Մնացականյան, ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ

**2.Գործուղման վայրը և ժամկետները՝**

Շվեյցարիայի Համադաշնություն (Ժնև), 2026թ. հունիսի 24-27-ը

**3.Հրավիրող կողմը՝**

ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով

**4.Գործուղման նպատակը՝**

Մասնակցել Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի 74-րդ լիագումար նիստին

**5.Քննարկված թեմաները՝**

Վիճակագրական և աշխարհատարածական տեղեկատվության ինտեգրում, Միգրացիայի և մարդկային շարժունակության չափում, Հասարակական և տեխնոլոգիական փոխակերպումների ազդեցությունը պաշտոնական վիճակագրության հիմունքների վրա, Միջազգային վիճակագրական աշխատանքների համակարգումը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի տարածաշրջանում, Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի բյուրոյի կողմից անցկացված խորը վերանայումների արդյունքները, 2026 և 2027 թվականների խորը վերանայումները, Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի թեմատիկ քննարկումների կազմակերպման ուղեցույցներ, Պաշտոնական վիճակագրության մոդեռնիզացման բարձր մակարդակի խմբի աշխատանքը, Կոնֆերանսի շրջանակում պատրաստված զեկույցներ, ուղեցույցներ և առաջարկություններ՝ Արտագաղթի չափում, Արտագաղթի և շարժունակության նոր ձևեր, Ազգային վիճակագրական գրասենյակների փոփոխվող դերը տվյալների էկոհամակարգերում, Շրջանաձև տնտեսության չափում, Վտանգավոր իրադարձությունների և աղետների չափում՝ հիմնական ցուցանիշների հավաքածուի իրականացման ուղեցույցներ, Վիճակագրական կազմակերպությունների համար ընդհանուր գործունեության մոդելի (GAMSO) արդիականացում, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի վիճակագրության ենթածրագրի աշխատանքային ծրագիր՝ Եվրոպական

վիճակագիրների կոնֆերանսի, դրա բյուրոյի և մասնագետների թիմերի աշխատանքի վերաբերյալ զեկույցներ, ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի 2026 թվականի նստաշրջանից բխող հարցեր, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի վիճակագրության ենթածրագրի ծրագրային պլանավորման փաստաթղթեր, Հաշվետվության ընդունում:

2026թ. հունիսի 25-ին մասնակցել եմ Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի հանդիպմանը:

Բյուրոյի նիստին ներկայացվեցին և քննարկվեցին հետևյալ թեմաները.

1. ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի գործադիր կոմիտեի կողմից բոլոր ենթածրագրերի, այդ թվում՝ վիճակագրության վերանայում և առաջնահերթությունների սահմանում

2. 2027 թվականին Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի 75-ամյակի տոնակատարություն

3. Լիագումար նիստի ընթացքում ի հայտ եկող ցանկացած նոր հարց:

**6.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Կոնֆերանսին Հայաստանը ելույթով հանդես եկավ հետևյալ թեմաների շուրջ. Վիճակագրական և աշխարհատարածական տեղեկատվության ինտեգրում, Արտագաղթի չափում, Արտագաղթի և շարժունակության նոր ձևեր, Վիճակագրական կազմակերպությունների համար ընդհանուր գործունեության մոդելի (GAMSO) արդիականացում, Հասարակական և տեխնոլոգիական փոփոխությունների ազդեցությունը պաշտոնական վիճակագրության հիմունքների վրա:

**7.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Հանդիպման ժամանակ որոշումներ ընդունվեցին հետևյալ հարցերի վերաբերյալ. Արտագաղթի չափում, Արտագաղթի և շարժունակության նոր ձևեր, Ազգային վիճակագրական գրասենյակների փոփոխվող դերը տվյալների էկոհամակարգերում, Շրջանաձև տնտեսության չափում, Վտանգավոր իրադարձությունների և աղետների չափում՝ հիմնական ցուցանիշների հավաքածուի իրականացման ուղեցույցներ, Վիճակագրական կազմակերպությունների համար ընդհանուր գործունեության մոդելի (GAMSO) արդիականացում, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի վիճակագրական աշխատանքային ծրագրին վերաբերող զեկույցներ, ՄԱԿ-ի քարտուղարության պլանավորման և հաշվետվությունների ցիկլի համատեքստում

պատրաստված վիճակագրության ենթածրագրի պաշտոնական պլանավորման փաստաթղթեր:

Հանդիպման վերջում հաստատվեց հաշվետվությունը: Օրակարգի առանձին հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվեցին օրակարգի համապատասխան կետերի քննարկման վերջում: Կոնֆերանսից հետո կպատրաստվի մանրամասն հաշվետվություն և կներկայացվի բոլոր մասնակիցներին՝ մեկնաբանությունների համար:

**8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝**

Մասնակցությունը կոնֆերանսին հնարավորություն ընձեռեց քննարկելու և ծանոթանալու վիճակագրական գրասենյակների աշխատանքի ռազմավարական ուղղություններին, վիճակագրության տարբեր ոլորտների մշակման, վարման և տարածման արդի փորձին, վերջին զարգացումներին, զեկույցներին, ուղեցույցներին և առաջարկություններին, քննարկելու իրականացված և պլանավորելու իրականացվելիք խորացված վերանայումները, ներկայացնելու Հայաստանի փորձը, ամրապնդելու վիճակագրական ներուժն ու մոդեռնիզացնելու պաշտոնական վիճակագրության համակարգը:

**9.Ստորագրությունը, ամսաթիվը՝**

ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ Ստեփան Մնացականյան

29.06.26թ.

**Հավելված N 3**
**ՀՀ վարչապետի 2018 թ. սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման**

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ**

1. Մարմնի անվանումը — **ՀՀ վիճակագրական կոմիտե**
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը — **Վարչապետի որոշում թիվ 497-Ա 09.06.2026թ**
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) — **Ստեփան Մնացականյան**, ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը — **Շվեյցարիայի Համադաշնություն՝ Ժնև**
5. Գործուղման ժամկետները — **24.06.2026-27.06.2026թթ**
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ — **2026թ. պետական բյուջեով ՎԿ-ին հատկացված միջոցների հաշվին**

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման կարգերակը)

**□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը**

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

| Ծախսի տեսակը | | Ստեփան Մնացականյան | Ընդամենը (հազ. դրամ) |
|---|---|---|---|
| Ճանապարհածախս | Ավիաթռռայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս) | էկոնոմ դաս | |
| | Ավիատոմսի արժեքը (դրամ) | 225679.3 | 225.68 |
| Գիշերավարձ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) | $220.0 | |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | 80936 | |
| | Օրերի քանակը | 3 | |
| | Ընդամենը (դրամ) | 242807 | 242.81 |
| Օրապահիկ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) | $173.0 | |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | 63742 | |
| | Օրերի քանակը | 4 | |
| | Ընդամենը (դրամ) | 254967 | 254.97 |
| Այլ ծախսեր | Հակահամաճարակային նմուշառումների վճար | | |
| | Մուտքի արտոնագրի վճար | | |
| | Այլ ծախսեր (նկարագրել) | | |
| **Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)** | | **723454** | **723.45** |

Գլխավոր քարտուղար — Ա. Հայրապետյան

30.06.2026թ